ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 750-860-ԱԿԱՆ ԹԹ.

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ.

750 թ. հունվարին Միջագետքի Մեծ Զաբ գետի ափին տեղի ունեցած ընդհարման ժամանակ Օմայանների զորաբանակը գլխովին ջախջախվեց Աբբասյանների զորուժի կողմից: Օմայան Մրվան II խալիֆան տապալվեց, և գահ բարձրացավ Աբուլ Աբբասը (750-754)՝ հիմք դնելով նոր (Աբբասյան) հարստության: Աբբասյանները գահակալելուց առաջ խոստանում էին իշխանությանը տիրանալու դեպքում թեթևացնել քրիստոնյաների հարկերը[1], սակայն դրանից հետո ավելի ուժեղացրին հարկային կեղեքումները, քանի որ դադարեցին նվաճումները, և ընդհատվեց մեծա-գումար հասույթների հոսքը խալիֆայության գանձարան:

Աբբասյանների օրոք Հայաստանի կացությունն ավելի ծանրացավ Օմայանների հետ հայ նախարարների համագործակցության պատճառով: Աբուլ Աբբաս խալիֆան իր գահակալության առաջին տարում եղբոր՝ Զաֆար ալ-Մանսուրի գլխավորությամբ զորք ուղարկեց Արմինիա փոխարքայություն: Մոտ երկու տարի այդ զորքը մոլեգնում էր Հայաստանում՝ ջանալով հնազանդեցնել նախարարներին, որոնք, սակայն, երկրում մնում էին դրության տերը, ուստի Միջագետքում գործադրած հարկային բռնություններից[2] հետո Աբբասյանների զորքը Մանսուր խալիֆայի (754-775) հրամանով ներխուժեց Հայաստան, սակայն պարտվեց հայ նախարարների զորագնդերից[3]: Նույն խալիֆան Արմինիայի ոստիկան նշանակեց Ուսայդ ալ-Սուլամիին, որին Ղևոնդ պատմիչը հիշում է «Եզիդ որդի Ուսայդի» անվամբ: Ըստ Բալազուրի պատմագրի, այդ ոստիկանի մայրը Սյունյաց իշխանադուստրն էր[4]: Նորընծա ոստիկանը ճանաչեց հայ նախարարների ժառանգական իրավազորությունը և Հայոց իշխան կարգեց Սահակ Բագրատունուն (753-770): Սակայն, միաժամանակ, սաստկացան հարկային բռնությունները: Ընդ որում, աղետալի էր նաև խալիֆայությանը ենթակա Պարսկաստանի և մյուս երկրների դրությունը[5]: Եզիդի օրոք արաբները որոշ ժամանակ դադարեցրին հայոց

---

[1] **Петрушевский И.** *Ислам в Иране, Л., 1966, с. 57.*

[2] **Michel le Syrien,** *Chronique, t. II, ed. et trad. en francais par J. Chabot, Paris, 1901, p. 526, 527.*

[3] *Պատմություն* Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, *Ս. Պետերբուրգ, 1887, էջ 131:*

[4] **Նալբանդյան Հ.,** *Արաբացի ոստիկանները Հայաստանում (ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հաս. գիտ., 1956, N 8, էջ 111),* **Тер-Гевондян А.** *Армения и Арабский халифат, Е., 1977, с. 99-100.*

[5] **Spuler B.** *Iran in früh-islamischer Zeit, Wiesbaden, 1952, S. 461.*

այրուձիի պահպանման համար ռոճիկ վճարելը[6]: Ուստի նախարարներն իրենք էին հոգ տանում այրուձիի ծախսերի համար:

Այդ ժամանակաշրջանում Հայոց իշխան Սահակ Բագրատունին հիշվում է որպես մեծ հարստության տեր[7]: Նվաճումների դադարեցման պայմաններում հայոց այրուձիի պահպանումը ձեռնտու չէր Աբբասյաններին, քանի որ այն հայ նախարարների ինքնուրույն զոյավիճակի զորեղ հենարանն էր: Այդուամենայնիվ, խալիֆայությունը գերադասում էր ճանաչել նախարարների իրավունքները՝ ելնելով այն իրողությունից, որ նրանք էին երկրի բնական տերն ու տնօրենը, և նրանց միջոցով էր հնարավոր դառնում ապահովել բնակչության հնազանդությունը, կանոնավորապես գանձել հարկերը, կատարել ձրի աշխատանքային պարհակներ (մարդահարկ): Նախարարների վրա էին ծանրացած նաև Հայաստանը զանազան հրոսախմբերից պաշտպանելու հոգսերը[8]: Հայտնի է, որ արաբները հենվում էին նաև պարսիկ ազնվականության վրա: Վերջիններից Բարմաքյանները (իսլամացած զրադաշտական քրմերը) նույնիսկ արժանացան վեզիրի պաշտոնին: Հետագայում այդ տան գերազդեցիկ դերը նսեմացնելու միտումով 804 թ. Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան կոտորել տվեց նույն տոհմի ներկայացուցիչներին[9]:

Հույժ ծանր էր նաև հայ ազնվականության դրությունը: Ղևոնդ պատմիչի վկայությամբ, չդիմանալով հարկային կեղեքումներին, բնակչությունը հեռանում էր հայրենի եզերքից: Աղքատության ճիրաններում հայտնվեցին նաև «նախարարք և մեծամեծք»[10], որոնք չկարողանալով գոհացնել արաբական իշխանություններին, բազմիցս բողոքում էին Արմինիայի ոստիկանին, բայց ապարդյուն: Ոստիկանը քամահրեց նաև Հայոց իշխան Սահակ Բագրատունու և Տրդատ կաթողիկոսի դիմումները՝ վերացնելու հարկային չարաշահումները: Ավելին, Հասան ոստիկանը (771-775) հայերին լռեցնելու նպատակով Խորասանից ստվարաթիվ զորք տեղափոխեց Հայաստան՝ ավելի խստացնելով հարկահանությունը[11]: Սակայն նրա ձեռնարկումը հակառակ ազդեցությունն ունեցավ: Չհանդուրժելով հարկային բռնությունները՝ նախարարները գերադասեցին «զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր», - գրում է պատմագիրը[12]: 774 թ. Արտավազդ Մամիկոնյանը արաբների թշնամիների դեմ պատերազմելու պատրվակով Դվինի ոստիկանական զինանոցից

---

[6] Ղևոնդ, *էջ 128-129:*

[7] *Denys de Tell-Mahre, publ. et trad J. Chabot, Paris, 1895, p. 148.*

[8] Ղևոնդ, *էջ 130-131, 133-134:*

[9] *Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր, ներածութ. և բնագրից թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 372:*

[10] Ղևոնդ, *էջ 136-137:*

[11] *Նույն տեղում, էջ 137:*

[12] *Նույն տեղում, էջ 138:*

կարողացավ վերցնել զենքեր՝ իր շուրջը համախմբված զորականներին զինելով «ամենայն սպառազինությամբ», ապա պարզեց ապստամբության դրոշը, թեև նախարարները գիտեին, որ չէին կարող միայնակ հաղթել դեռևս իր հզորության գագաթնակետին գտնվող խալիֆայությանը:

Ապստամբությանը դեմ էր ազատանու զգալի մասը՝ Բագրատունիների գլխավորությամբ, որոնք զորակցություն չէին ակնկալում Բյուզանդիայից: Մինչդեռ Արտավազդ Մամիկոնյանն իր զորակիցներով անցավ Բյուզանդիային ենթակա Սամցխե (Եգերք) գավառ և կարգվեց նրա կառավարիչ[13]:

Սակայն Մամիկոնյանների մի մասը մնաց հայրենիքում և շարունակեց պայքարը՝ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Առիթը դարձյալ արաբների բռնություններն էին: Վերջիններս ժամանեցին Մուշեղին ենթակա Արշարունիք գավառ՝ պահանջելով հայերի սպանած իրենց ցեղակիցների արյան գինը: Մուշեղն իր կողմնակիցներով ամրացավ Արտագերս ամրոցում և հրաժարվեց կատարել նրանց պահանջը[14]: Նա կողմնակիցներ ունեցավ նաև Բագրևանդ գավառում, որի բնակչությունը ևս խիստ նեղվում էր ուժից վեր հարկահանությունից: Այդտեղ Մուշեղը համալրեց իր զորուժը: Ապստամբներին հուսադրում էր ոմն միայնակյաց՝ ներշնչելով, որ իբր թե «կատարեալ են ժամանակքն իսմայելի»[15]: Անշուշտ, ապստամբները ևս հույս ունեին, որ երկնազորի օգնությամբ հասնելու են հաղթանակի: Ղևոնդ պատմիչը նույնպես կարծում է, որ Մուշեղ Մամիկոնյանին «օգնութիւն տեառնէ վաղվաղակի հասանէր», որից զորանալով՝ նրանք պարտության մատնեցին արաբներին, սպանելով նաև նրանց զորագլխին[16]: Իր հերթին, նույն միայնակյացը շարունակում էր ապստամբներին ներշնչումներ անել, հորդորելով, որ չպետք է երկնչեն իրենց փոքրաթվությունից, քանզի նրանց մղած պատերազմը վարողն Աստված է, և որ հասել է իրենց փրկության ժամանակը, երբ վերականգնվելու է Հայոց (Թորգոմյան) թագավորությունը[17]: Միաժամանակ, պատմագիրը հավատ չի տածում միայնակյացի խոսքերի հանդեպ՝ նրան համարելով «խաբեբա և մոլեկան», որը ստապատիր տեսիլքներով մոլորեցնում է շատերին:

Ապստամբ նախարարները պահպանում էին հաղթանակի հանդեպ իրենց հավատը և միասնությունը: Ինչպես հաղորդում է Ղևոնդը, «ժողովեալ ամենայն նախարարք Հայոց ի մի վայր՝ առնէին առ միմեանց երդմունս և դաշինս ուխտի՝

---

[13] *Նույն տեղում, էջ 138-139:*

[14] *Նույն տեղում, էջ 139:*

[15] *Հաւաքումն Պատմութեան* **Վարդանայ Վարդապետի,** *Վենետիկ, 1862, էջ 75:*

[16] **Ղևոնդ,** *էջ 141:*

[17] *Նույն տեղում:*

կեալ և մեռանել ընդ միմեանս»[18]: Նրանց թիվը հասնում էր հինգ հազարի: Այդպիսով, Մուշեղ Մամիկոնյանի ձեռնարկած շարժումը վերաճում է հուժկու ընդվզման[19]: Սակայն Աշոտ Բագրատունին (Սահակի որդին) դեմ էր շարժմանը՝ գտնելով, որ հնարավոր չէ հաղթել «բազմագլուխ վիշապին», ուստի ապստամբները հարկադրված են լինելու «երթալ բնակիլ նժդեհութեամբ ընդ արքային Յունաց»[20]: Իհարկե, Բագրատունիներն ապստամբների դեմ քայլեր չձեռնարկեցին: Նրանց մի մասը նույնիսկ հարեց շարժմանը՝ անտեսելով Աշոտ Բագրատունու հորդորները: Վերջինս հետևում էր ապստամբների դեմ արաբական զորքերի տեղաշարժին՝ ջանալով կանխել վերահաս ընդհարումը, սակայն ոչինչ չստացվեց:

Արծրունիները, Ամատունիները, Տրունիները և ուրիշ նախարարներ գերադասեցին ուժերը տեղաբաշխել իրենց տիրույթներում՝ դրանք պաշտպանելու մտադրությամբ[21]: Ենթադրվում է, որ նրանք չեն հարել ապստամբական շարժմանը[22]: Սակայն հիշյալ նախարարներն իրենց ռազմուժով գործուն մասնակցություն են ունեցել ապստամբությանը: Նրանց առաջատար ուժերն էին Արծրունիների և Ամատունիների զորագնդերը, որոնց զորակից էր նաև Աշոտ Բագրատունու որդի Վասակը՝ Սմբատ սպարապետի եղբայրը[23]: Հարկային և այլ բնույթի կեղեքումները ոտքի էին հանել նաև հարավային Հայաստանի նախարարներին, նաև նրանց ենթակա ռամիկներին: Նրանք Համազասպ Արծրունու գլխավորությամբ ջանում էին գրավել Արճեշ քաղաքը[24]: Հայտնի է, որ խալիֆայությունում ծայր երկրների հարկահանությունը կազմակերպող կենտրոնները կատարում էին նաև պետական զանձարանի գործառույթներ և կուտակված հարկագումարներով ապահովում բանակի ու պետական այլ կառույցների կարիքները: Ընդ որում, հավաքված գումարների մեծ մասը փոխանցվում էր արքունական զանձարան[25]: Հայաստանում կորզված հարկագումարից հատկացվում էր նաև հայոց այրուձիու ռոճիկը՝ տարեկան 100 հազար դահեկան[26]: Պետք է կարծել, որ արաբներն Արճեշին մեծ նշանակություն էին տալիս ոչ միայն իբրև կարևոր հենակետի, այլև զանձահասութային կենտրոն լինելու պատճառով: Անշուշտ, հայերը ջանում էին գրավել այդ քաղաքը և բնակչությանը վերադարձնել բռնագանձված

---

[18] *Նույն տեղում, էջ 142:*

[19] **Լեո,** *Հայոց պատմություն, հ. II: Միջին դարեր, գիրք I (Երկերի ժողովածու, հ. II, Ե., 1967, էջ 389):*

[20] **Ղևոնդ,** *էջ 143-144:*

[21] *Նույն տեղում, էջ 144:*

[22] **Grousset R.** *Histoire de l'Arménie des origines a 1071, Paris, 1947, p. 327.*

[23] **Ղևոնդ,** *էջ 144, 146:*

[24] *Նույն տեղում, էջ 146-147:*

[25] **Мец А.** *Мусульманский ренессанс, М., 1973, с. 100.*

[26] **Վարդան Վարդապետ,** *էջ 74:*

հարկագումարները: Համակված լինելով անձնազոհ պայքարի ոգով՝ նրանք միմյանց խրախուսում էին քաջությամբ կյանքները զոհել «ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս», Աստծուց աղերսելով զորակից լինել իրենց[27], գրում է պատմիչը: Սակայն Արձեշի մոտ արաբական գերակշիռ, դարանամուտ ուժերը կարողացան հանկարծակիի բերել և պարտության մատնել ապստամբներին:

Հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանությունը սրբազնագործվում էր նաև Կարին քաղաքը պաշարած ապստամբների կողմից: Այդտեղ 1000 հոգուց բաղկացած հայ պատերազմիկները արիաբար մարտի նետվեցին արաբական 30 հազարանոց բանակի դեմ: Պատմագրի կարծիքով, ապստամբներին զորակցում էր հրեշտակների բազմությունը[28]: Հավանաբար, Կարինում նույնպես կուտակվում էին արաբների զանձած հարկագումարները: Ստեփանոս Տարոնեցու հաղորդմամբ, Եզիդի օրոք Բյուզանդիայի Կոստանդին կայսրը արաբներից գրավեց Կարինը և «կործանեաց զպարիսպ նորա և բացեալ զտուն զանձուցն...»[29]:

Վասպուրականի, Մոկաց ապստամբ ռազմիկները չկարողացան միանալ Կարինը պաշարած հայերին, քանի որ արաբական հրամանատարությունը կանխեց նրանց՝ զորքը շարժելով դեպի Ապահունիքով ձգվող «արքունի պողոտա», իմա՝ պետության կողմից վերահսկվող ռազմուղին[30]:

Կարինը պաշարած ապստամբներն ուղղվեցին դեպի Ապահունիք՝ միանալու հարավից դեպի այնտեղ շարժվող հայ մարտիկներին: Սակայն Բագրևանդի՝ Արձնի գյուղի մոտ նրանց ճանապարհը փակեց արաբական ստվարաթիվ զորախումբը՝ պարտության մատնելով հայերին: Այդ մարտում զոհվեցին ապստամբների առաջնորդ Մուշեղ Մամիկոնյանը, Վահան Գնունին «և այլք բազումք ի նախարարաց և ռամկաց»[31]:

Ապստամբության պարտությունն, անշուշտ, հանգեցրեց Հայոց դիմադրական ուժերի ջլատմանը, որոշ նախարարներ հեռացան Բյուզանդիա՝ զբաղեցնելով բարձր պաշտոններ: Նրանցից Անձևացյաց Տաճատ իշխանը կայսեր կողմից նշանակվեց Բուկելարների բանակաթեմի զորապետ[32]: Բայց Տաճատը 781 թ. գերադասեց վերադառնալ հայրենիք և կարգվեց Հայոց իշխան (781-785): Ըստ երևույթին, նա հաշվի առավ արաբների հաշտարար քաղաքականությունը հայ նախարարների հանդեպ:

---

[27] **Ղևոնդ,** *էջ 149:*

[28] *Նույն տեղում, էջ 150:*

[29] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 132:*

[30] **Ղևոնդ,** *էջ 147-148:*

[31] *Նույն տեղում, էջ 150-154:*

[32] **Թեոփանես Խոստովանող,** *Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հր. Բարթիկյանի, Ե., 1983, էջ 163:*

Ղևոնդի վկայությամբ, արաբ զորապետները ապստամբությունից հետո բերդերում ամրացած հայ նախարարներին հաշտություն էին առաջարկում, «տային գիր երդման և իջուցանէին յամրոցացն»[33]:

Բյուզանդիայի առաջխաղացման պայմաններում հայ նախարարների դիրքորոշումը կարևոր նշանակություն ուներ արաբների համար: Վերջիններս ջանում էին հայոց ուժերն օգտագործել իրենց թշնամիների դեմ, իհարկե, նաև նրանց հեռու պահել հավատակից կայսրությունից: 785 թ. Դերբենտի լեռնանցքը խազարներից պաշտպանելու նպատակով, Արմինիայի ոստիկանը հայկական զորուժ է ուղարկում այնտեղ: Հիվանդաբեր ու տոթաշունչ պայմաններում հայտնված հայ զորականներից շատերը զոհ են գնում տարափոխիկ հիվանդություններին: Նրանց մեջ էին նաև Տաճատ Անձևացին, սպարապետ Բագարատ Բագրատունին, Ներսեհ Կամսարականը և ուրիշներ[34]:

Հայաստանի նախարարները հիմնականում պահպանեցին իրենց ինքնավար իրավունքները, հակառակ Արմինիայի ոստիկանների ջանքերի: Վերջիններս երկար չէին դիմանում իրենց պաշտոնում[35]: Իր բռնարարքներով հայտնի էր Խուզայմա ոստիկանը, որն առաջին անգամ կառավարել է 786-787 թվերին[36]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, սա հայոց կաթողիկոս Հովսեփ Բ Փարպեցուն բանտ է նետում, երբ վերջինս մերժում է նրա պահանջը՝ իրեն հանձնել կաթողիկոսարանի դաստակերտները՝ Արտաշատը, Կավակերտը և Հոռոմոց մարգը[37]: Հայտնի է, որ Հովսեփ Փարպեցին աթոռակալել է 795-806 թթ.: Իսկ Խուզայման ոստիկանի պաշտոնում էր նաև 803-806 թթ.[38], երբ, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել հիշյալ դաստակերտների զավթումը: Սակայն կաթողիկոսին հաջողվում է հետ վերադարձնել Կավակերտն ու Հոռոմոց մարգը, ինչը վկայում է Հայոց եկեղեցու հեղինակության մասին: Խալիֆայության դրածոները ջանում էին ունեզրկել նաև հայ որոշ նախարարների՝ նրանց կալվածքները հանձնելով Հայաստան գաղթած արաբական ցեղերին:

Նշենք՝ Խուզայման մահապատժի է ենթարկել հայ մի քանի նախարարների[39]: Դա տեղի է ունեցել 785 թ. հունվարին[40]: Սակայն խալիֆայի դրածոները չկարողացան

---

[33] Ղևոնդ, *էջ 152:*

[34] *Նույն տեղում, էջ 161:*

[35] Тер-Гевондян А., *նշվ. աշխ., էջ 275-276.*

[36] Նալբանդյան Հ., *նշվ. աշխ., էջ 114:*

[37] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ *Պատմութիւն Հայոց, Թիֆ-լիս, 1912, էջ 111-112: Այս մասին տե՛ս նաև* Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 1066-1067,* Մելիք-Բախշյան Ս., *Հայաստանը VII-IX դարերում, Ե., 1968, էջ 106-107:*

[38] Նալբանդյան Հ., *նշվ. աշխ., էջ 117:*

[39] Ղևոնդ, *էջ 165,* Ասողիկ, *էջ 133:*

ոչնչացնել հայ նախարարական համակարգը: Գերիշխող էին Բագրատունիներն ու Արծրունիները, որոնց շուրջն էին համախմբվել Հայաստանի մյուս նախարարությունները:

Խուզայմա ոստիկանին հաջորդած Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամին արաբական Նիզարի ցեղախմբին տեղափոխեց Հայաստան: Արաբական ցեղեր տեղափոխվեցին նաև նրան հաջորդած ոստիկանների օրոք[41]: Սակայն չհաջողվեց ունեզրկել հայ նախարարներին: Ընդ որում, Հայաստանում հաստատված արաբ ամիրաները ևս հաճախ ծառանում էին խալիֆայության դեմ՝ ձգտելով անկախության[42]:

Հայ նախարարները պահպանում էին իրենց իշխանությունը, հողատիրույթները, հոգևոր ինքնությունը: Արմինիայի ոստիկանները ջանում էին նաև հավատափոխ անել նախարարներին, սակայն դա հազվադեպ էր հաջողվում նրանց: Նրանք հավատուրացներին օժտում էին բարձր պաշտոններով, կալվածքներով, զանազան առանձնաշնորհումներով[43], պատժում անհնազանդներին: Հայտնի է Խուզայմա ոստիկանի հաշվեհարդարը Վասպուրականի նախարարների նկատմամբ: Նա բանտ նետեց Արծրունի նախարարներ Համազասպին, Սահակին ու Մեհրուժանին, ապա խալիֆայից ստացավ նրանց մահավճռի հրամանը: Գլխատումից փրկվեց Մեհրուժանը՝ իսլամ ընդունելով: Վերջինս հաշվեհարդար տեսավ 774-775 թթ. ապստամբության առաջնորդ Մուշեղ Մամիկոնյանի որդիների նկատմամբ, որոնք ապաստանել էին Վասպուրականում[44]: Այդ գնով Մեհրուժանին հաջողվեց իշխել Վասպուրականում: Նրա գահերեցությունը 782-785 թթ.[45] էր, սակայն այդ թվականներին այնտեղ իշխում էին Համազասպ և Սահակ Արծրունիները[46]:

Հայաստանը արաբական ցեղերով բնակեցնելը նպատակ ուներ թուլացնել հայ նախարարներին և նրանց կողմնորոշել դեպի խալիֆայություն, կտրել Բյուզանդիայից: Կարևոր նշանակություն ուներ նաև Հայաստանի միջոցով խալիֆայության գանձահասութային կարիքները բավարարելը: Ուստի VIII դ. վերջերին խիստ ծանրացվում է հարկային բեռը[47]: Ոստիկանի կողմից հարկահանների գլուխ կարգված Իբնդոկեն «սաստիկ դժնդակութեամբ խոշտանգէր զբնակիչս

---

[40] **Markwart J.** *Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen geographen, Wien, 1930, S. 85.*

[41] *Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր, էջ 373:*

[42] *Նույն տեղում, էջ 374-375:*

[43] **Ղևոնդ,** *էջ 164-165:*

[44] **Վարդան Վարդապետ,** *էջ 76:*

[45] **Toumanoff C.** *Manuel de genéalogie et de chronologie pour l'histoire de la Caucasie chrétienne (Armenie-Georgie-Albanie), Roma, 1976, p. 89.*

[46] **Ղևոնդ,** *էջ 134-135:*

[47] *Նույն տեղում, էջ 167:*

աշխարհիս հարկապահանջութեամբ», - գրում է պատմագիրը՝ նշելով, որ «ամենայն նախարարք և ռամիկք հանդերձ եկեղեցականօք և կաթողիկոսիւն[48]... աղաչէին թեթևացուցանել զանուր ծանրութեան սակին զոր պահանջէր[49]«: Սակայն ապարդյուն են անցնում նրանց դիմումները:

Հայ նախարարները հետզհետե կողմնորոշվում են դեպի արաբները՝ հաշվի առնելով այն ծանրակշիռ հանգամանքը, որ Հայաստանում գերիշխողը նրանք էին: Արաբները, իրենց հերթին, գերադասում էին ճանաչել նախարարների ինքնավար իրավունքները և իշխանությունը: Այդ կերպ հնարավոր էր դառնում ապահովել Հայաստանի խաղաղությունը և նախարարների օրինապահությունը:

Ստեղծված պայմաններում զորացող Բագրատունի տոհմը առաջատար դիրքերի հասավ ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում: Աշոտ Մսակեր Բագրատունին VIII դ. վերջերից սկիզբ դրեց տոհմի վերելքին[50], իսկ 790-826 թթ. վարեց Հայոց իշխանի պաշտոնը:

VIII դ. սկզբներին Հայաստանում ցանկանում էր գերիշխել նաև Ջահաֆը, որը թերևս սերում էր պարսիկ ազնվականներից. ըստ Դրասխանակերտցու՝ «ի պարսիկ տոհմէ»[51]: Բայց պարսկական ծագում ունենալը հիմք չէր կարող դառնալ Հայաստանում գերիշխելու համար: Ուստի Ջահաֆը կնության առավ 775-ին զոհված Մուշեղ Մամիկոնյանի դուստր Արուսյակին և կարողացավ տիրանալ Արշարունիք գավառի մի մասին՝ ջանալով «ի ձեռն կնոջն» իշխել ամբողջ գավառին»[52]: Սակայն Աշոտ Մսակերը և նրա եղբայր Շապուհը Շիրակից զորքը շարժեցին նրա դեմ և պարտության մատնեցին Արշարունիք թափանցած Ջահաֆի զորքին և «գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք և զգաւառն Տայոց»[53]:

Ջահաֆի որդի Աբդ ալ-Մալիքը 811 թ. գրավեց Դվինը՝ իրեն հռչակելով Արմինիայի կառավարիչ[54]: Սակայն Հայաստանում իրական իշխողը Աշոտ Մսակերն էր: 820-ական թթ. սկզբին Ջահաֆի ժառանգներից Սավադը (Սևադա) փորձեց գրավել Տարոնը, սակայն պարտություն կրեց Աշոտ Մսակերից, իսկ Դվինում՝ նրա եղբորից՝ Շապուհ սպարապետից[55], ապա հեռացավ Սյունիք՝ հաստատվելով Ծղուկ գավառի Շաղատ ավանում, իհարկե, չհրաժարվելով Հայաստանում գերիշխելու մտադրությունից: Նա կարողացավ իր կողմը գրավել Սյունիքի իշխան Սահակին և

---

[48] Նկատի ունի Եսայի Ա կաթողիկոսին(775-788):
[49] Ղևոնդ, էջ 167:
[50] Վարդան Վարդապետ, էջ 79, 82:
[51] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 113:
[52] Վարդան Վարդապետ, էջ 76:
[53] Նույն տեղում:
[54] Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 381:
[55] Վարդան Վարդապետ, էջ 78:

ուրիշների: Սակայն Սյունյաց նախարար Վասակը Բաբեկի զորակցությամբ կարողացավ ջախջախել Սավադին[56]:

Թեև Արցախը նույն ժամանակ ընդգրկված էր Աբբասյան խալիֆայության վարչաքաղաքական համակարգում, սակայն մերված չէր նրան, պահպանում էր իր ազգային ինքնակայությունը և ավանդական դիրքերը, քրիստոնեական հավատը: 822 թ. Արցախի նախարար Սահլ Սմբատյանը Մեծիրանք գավառի Շիկաքար բերդում ամրացած արաբների դեմ փայլուն հաղթանակ տարավ՝ իր «քաջազօր եղբարքք և զօրօքն իւրեանց ... դիաթաւալ զնոսա ցիր և ցան կացուցանէին ... զգերեալսն ի բաց կորզէին», - գրում է Հայոց Աղվանքի պատմագիրը[57]:

Աշոտ Մսակերի վախճանվելուց հետո Հայոց իշխանն էր նրա ավագ որդին՝ Բագարատը: Մյուս որդին՝ Սմբատը, 826 թ. պատանդությունից վերադառնալով, ստանձնեց Հայոց սպարապետի պաշտոնը՝ իշխելով Արշարունիք գավառին[58]: Իսկ Բագարատը տիրում էր Տարոն-Տուրուբերանին (Խլաթ կենտրոնով): Մոկքում իշխում էր Մսակերի կրտսեր որդին՝ Սահակը[59]:

Իններորդ դարի առաջին կեսին հայ նախարարները հայտնի էին արաբամետ դիրքորոշմամբ, ինչը հարուցում էր Բյուզանդիայի դժգոհությունը: 837 թ. կայսրության զորքերը ներխուժեցին Հայաստան (Եփրատի հովիտ)՝ ասպատակելով Հանձիթ, Ծոփք և ուրիշ գավառներ[60], գերելով բազմաթիվ հայ ազատների: Մութասիմ խալիֆայի (833-842) զորքը հարձակում գործեց բյուզանդացիների դեմ: Բյուզանդացի մատենագիր Գենեսիոսի վկայությամբ, այդ արշավանքին մասնակցում էին նաև հայկական զորամիավորումները՝ Հայաստանի իշխանաց իշխանի գլխավորությամբ[61]: Իշխանաց իշխանն այդ ժամանակ Բագարատ Բագրատունին էր (826-851)[62]: Նշված արշավանքը տեղի է ունեցել 838 թվին[63]: Արշավանքին հայկական զորագնդերի մասնակցությունը վկայում է, որ հայ նախարարները արաբների հետ դաշնակցած՝ պաշտպանում էին Հայաստանը այնտեղ ներխուժած բյուզանդացիներից: Այս շրջանում, ըստ Բալազուրիի, «Հայաստանի իշխանները

---

[56] **Մովսէս Կաղանկատուացի,** *Պատմութիւն Ադուանից աշխարհի, աշխատա-սիրությամբ՝ Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 326:*

[57] *Նույն տեղում:*

[58] **Ասողիկ,** *էջ 106,* **Վարդան Վարդապետ,** *էջ 79:*

[59] **Թովմա Արծրունի և Անանուն,** *Պատմութիւն տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 2006, էջ 237,* **Վարդան Վարդապետ,** *էջ 78,* **Մխիթար Այրիվանեցի,** *Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 69:*

[60] **Honigmann E.** *Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, S. 58.*

[61] *Genesii Regum ex recognitione Caroli Lachmani, Bonnae, 1834, p. 67.*

[62] **Գրիգորյան Գ. Ս.,** *Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983, էջ 62:*

[63] **Laurent J.** *l' Arménie entre Byzance et l'islam, Paris, 1919, p. 212,* **Tojnbee A.** *Constantine Porphyrogenitus and his world, London, 1973, p. 405.*

նստել էին իրենց երկրներում, և նրանցից յուրաքանչյուրը պաշտպանում էր այն՝ հարկ եղած դեպքերում քամահրելով արաբ պաշտոնյաներին»[64]:

Տարոնում, Մոկքում, Սասունում, Խութում, Մանանաղիում Բագրատունիների հաստատվելը էականորեն մեծացրեց նրանց ազդեցությունը հարավային Հայաստանում:

840-ական թթ. ճգնաժամ ապրող Խալիֆայությունը փոխեց իր վերաբերմունքը հայ նախարարների նկատմամբ՝ ջանալով վերացնել նրանց ինքնուրույնությունը: Մութավաքիլ խալիֆան (847-861) 849 թ. Ապուսեթին կարգում է «վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի», ստվարաթիվ զորքով ուղարկելով Հայաստան: Ապուսեթը առաջին հարվածն ուղղում է Տարոն գավառի՝ Հայոց իշխան Բագարատ Բագրատունու տոհմական տիրույթի վրա՝ հուսալով, որ այդ կերպ հնարավոր կդառնա նախարարների հնազանդեցումը: Հարկահանության գործը նա հանձնարարում է Արզնին ու Աղձնիքի մի մասին տիրացած Մուսա իբն Զուրարային: Սակայն Բագարատին զորակից եղավ Վասպուրականի նախարար Աշոտ Արծրունին, որը նրա հետ դաշինք էր կնքել՝ այն հաստատելով ուխտադիր երդմամբ: Հայ նախարարների միացյալ ուժերը պարտության մատնեցին Ապուսեթի զորքին:

Խալիֆան 851 թ. պատժիչ զորք ուղարկեց Հայաստան՝ Միջագետքում վախճանված Ապուսեթի որդի Յուսուֆի գլխավորությամբ, որպեսզի «զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ, զի մեր լիցի ժառանգութիւն նոցա...»[65]: Յուսուֆը, հաշվի առնելով հոր դառն փորձը, ջանաց խորամանկությամբ զինաթափել հայ նախարարներին: Նա զորքը շարժեց դեպի Վասպուրական՝ Աղբակ գավառ և Աշոտ Արծրունուն հրավիրեց իր մոտ: Սակայն վերջինս իր զորագնդերը շարժեց Մարդաստան գավառ և այնտեղից պատվիրակություն ուղարկեց իր մոր՝ Հռիփսիմեի գլխավորությամբ: Վերջինս կարողացավ հաշտություն կորզել Յուսուֆից, որը պատանդներ վերցնելով՝ մեկնեց Խլաթ քաղաք: Սակայն արաբները հարմարադեպ պահի էին սպասում, «զի որսայցեն նենգութեամբ խաբել»[66], - գրում է պատմագիրը:

Յուսուֆին հաջողվեց խաբեությամբ ծուղակը գցել Բագարատին և նրան, կապանքների մեջ դրած, ուղարկեց Խալիֆայության նստավայր՝ Սամառա քաղաք: Թեև Յուսուֆը հայ նախարարներին խոստացել էր հեռանալ Հայաստանից, բայց դրժելով իր խոստումը՝ ձմեռը զորականների հետ հաստատվեց Տարոնի Մուշ քաղաքում՝ նպատակադրվելով գարնանը «սրով և գերութեամբ և մեծամեծ

---

[64] **Baladhuri.** *The Origins of the Islamic State, vol. I, New York, 1916, p. 330.*

[65] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 131:*

[66] *Նույն տեղում, էջ 133:*

հարուածով» գերել նախարարներին ու նրանց փոխարեն Հայաստանում կարգել արաբ կառավարիչների, որոնք պետք է հաստատվեին «յամուրս հայոց»[67]: Սակայն Յուսուֆը Խութ գավառի ռազմիկներից ծանր պարտություն կրեց և սպանվեց[68]: Հայ մարտիկներին գլխավորող խութեցի Հովնանը, հավանաբար, Բագարատի վասալ ազատներից էր, որին ենթակա խութեցիները մարտի ելան՝ «իբրու վրէժս իմն իշխանին Բագարատայ պահանջեալ...»[69]:

Խալիֆայությունը չէր հրաժարվում անհնազանդ հայ նախարարներին պատժելու և Հայաստանը մեկընդմիշտ հնազանդեցնելու մտքից: Դա դյուրացնելու էր նաև Վրաստանի ու Կովկասի մյուս շրջանների նկատմամբ գերիշխանության պահպանումը: Այդ նպատակով 850 թ. Հայաստանն ու Վրաստանը ողողեցին թուրքական վարձկան զորագնդերը՝ Բուղա զորապետի գլխավորությամբ: Վերջինս պետք է հայ նախարարներին կալաներ և տեղափոխեր Սամառա[70]: Նա առաջին հարվածն ուղղեց Տարոն գավառին՝ «իբրև զկայծակն իմն փայլակնահար զաշխարհն արարեալ», ապա ձերբակալեց Բագարատ Բագրատունու որդիներին՝ Տարոնի իշխաններ Աշոտին ու Դավթին՝ «հանդերձ այլ ևս իւրեանց ազգակցօք»[71]: Տարոնն ասպատակելուց հետո Բուղան զորքը շարժեց դեպի Վասպուրական, սակայն նրա դեմ ելան Արծրունի, Գնունի, Գազրիկյան, Ամատունի, Վարաժնունի, Ընտրունի, Ակեացի, Վահևունի և Անձևացի նախարարների զորագնդերն՝ «անքակ ի միմեանց»: Շարժվելով դեպի Կորճայքի Որսիրանք գավառի Թով գյուղի մոտակայք՝ «Արյան լիճ» կոչված ձորահովտում նրանք փայլուն հաղթանակ տարան Բուղայի զորքի դեմ[72]: Սակայն վերջինս ստապատիր խոստումներով ծուղակը գցեց իր դեմ հաղթանակ տարած նախարարներին և նրանց տեղափոխեց Սամառա: Բռնակալի զորքին քաջաբար դիմադրեց նաև Արցախի իշխան Եսայի Ապումուսեն, որը նույնպես ընկավ նրա լարած որոգայթը և գերության տարվեց[73]: Նույն կերպ Բուղային հաջողվեց գերել նաև մյուս նախարարներին: Սմբատ Բագրատունին (Ապլաբասը)՝ Հայոց սպարապետը, հնազանդություն հայտնեց Բուղային, իհարկե, առանց զինական

---

[67] Նույն տեղում, էջ 135:

[68] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 117-118, **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 135: Դրասխանակերտցու երկի տպագիր բնագրում Յուսուֆի փոխարեն նշված է Ապուսեթի անունը, ինչը, հավանաբար, սպրդել է հետագա գրչագրողների մեղքով:

[69] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 117-118: Ըստ Բալազուրիի, ապստամբած խութեցիներին օգնական զորք են ուղարկել նաև Հայաստանի ուրիշ գավառների իշխաններ (**Baladhuri,** *I, p. 331*):

[70] Նույն տեղում, էջ 118:

[71] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 119:

[72] **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 165-166:

[73] Նույն տեղում, էջ 201-202, 207:

աջակցության, միայն խորհրդատվությամբ օգնելով նրան[74]: Սակայն Թիֆլիսը գրավելուց, ապա Վրաստանի Ծանարք գավառում՝ Թերեք գետի ակունքների մոտ կրած պարտությունից հետո բռնակալը Սմբատին ևս գերության տարավ Սամառա, որտեղ նա նահատակվեց՝ հրաժարվելով իսլամ ընդունելուց[75]:

Խաբեությամբ Սամառա տարվեցին նաև Արցախի իշխաններ Ատրներսեհը, Եսայի Ապումուսեն, Սյունիքից՝ Գրիգոր և Փիլիպե իշխանները, Շաքի գյուղի (Ծղուկ գավառում) տեր Սահլը՝ Սմբատի որդին և ուրիշներ: Ազատության մեջ մնացին Սմբատ սպարապետի որդիները՝ Աշոտը, Մուշեղն ու Սմբատը, Մոկաց իշխանը և ուրիշներ, որոնց, իհարկե, Բուղան չէր վստահում, ուստի Հայաստանի կառավարիչ նշանակեց ոմն Իբրահիմի: Վերջինս, սակայն, չկարողացավ իշխել Հայաստանում:

Վասպուրականում Ապուպելճի որդի Գուրգեն Արծրունին մի քանի անգամ ջախջախեց արաբական զորայիններին, ուստի Բուղան ստիպված ճանաչեց նրա իշխանությունը[76]: Անընդունելի է այն ենթադրությունը, որ իբր Բուղան Գուրգենին ճանաչեց Վասպուրականի իշխան, քանի որ «նախապես տեսել էր նրա հավատարմության ապացույցը՝ հավատուրացության մեջ»[77]: Գուրգենը իսլամ չէր ընդունել: Ավելին, նա ջախջախեց Բուղայի կողմից իր դեմ նետված վարձկան զինվորներին, որոնք, ժամանակակից պատմագրի վկայությամբ՝ «ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական..., զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա»[78]: Նշենք նաև, որ Բուղա զորապետը ի վերջո գերադասեց Աշոտ Բագրատունուն (Սմբատ սպարապետի որդուն) ճանաչել Հայաստանի սպարապետ:

Բուղա զորապետը Հայաստանից հեռացավ 850 թ. սկզբին[79]: Իսկ 859 թ. աքսորյալ հայ նախարարները վերադարձան հայրենիք, «յիւրաքանչիւր բնիկ տէրութիւնս»[80], հնազանդվելով «ընդ պետութեամբ» իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն[81]:

Խալիֆայությունը 860-ական թվերին հենվում էր նաև Հայոց ռազմուժի վրա, հակառակորդների դեմ ձեռնարկած գործողությունների ժամանակ: 867 թ. Իրանի Ղազվին քաղաքում բռնկված ապստամբության մասնակիցների դեմ կռվող

---

[74] *Նույն տեղում, էջ 194:*

[75] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 129-130:*

[76] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 220:*

[77] **Laurent J.** *Un feodal arménien au IX-e siècle: Gourguen Ardzrouni fils d' Abou Beldj (Etudes d' histoire Arménienne, Louwain, 1971, p. 36).*

[78] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 220:*

[79] **Baladhuri,** *I, p. 333.*

[80] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 135:*

[81] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 231,* **Ասողիկ,** *էջ 158:*

արքունական զորամասերի կազմում էր նաև հայոց զորագունդը՝ Աշոտ Արծրունու գլխավորությամբ[82]:

Հայաստանում հայ նախարարները համախմբված էին Բագրատունիների և Արծրունիների շուրջը[83]: Մութավաքիլ խալիֆայի սպանությունից (861 թ.) հետո ծայր առած երկպառակությունների ընթացքում հաճախակի փոփոխվող խալիֆաները չէին կարող զբաղվել ծայրերկրների գործերով[84]: Խալիֆայությունում դրությունը սրվեց հատկապես 871 թ., երբ Իրաքի հարավում բռնկվեց աֆրիկացի ստրուկների («զինջերի») հուժկու ապստամբությունը[85]:

860-ական թթ. սկսած՝ Աշոտ Բագրատունու շրջահայաց քաղաքականությամբ Հայաստանում հետզհետե դիմազրկվեց Արմինիայի ոստիկանը, Պարտավի ամիրա Յամանիկը հավակնում էր գերիշխել նաև Հայաստանում՝ դավեր լարելով հայ նախարարների, հատկապես իշխանաց իշխան Աշոտի դեմ[86]: Սակայն վերջինիս ջանքերով ի դերև հանվեց նրա մտադրությունը: Աշոտ Բագրատունու և նրա շուրջը համախմբված նախարարների առաջարկով խալիֆան Արմինիայի ոստիկան կարգեց Սիմադին (Հալթի որդուն): Հայ նախարարները վերջինիս դիմավորեցին և տարան Դվին և ոչ թե Արմինիայի մյուս նստավայր Պարտավ, որտեղ նա կարող էր ընկնել Յամանիկի ազդեցության տակ և նրա հետ դավեր լարել հայ նախարարների դեմ: Մինչդեռ Սիմադը, զգալով որ Հայաստանում իր իշխանությունը հենարան չունի, և իրական գերակայություն ունեն հայ իշխանները, ջանում էր Դվինի ամիրայի զորակցությամբ նրանց հպատակեցնել[87]: Սակայն Աշոտ Բագրատունու ջանքերով վիժեցվեց նրա դավադիր ձեռնարկումը, և Սիմադը վտարվեց Հայաստանից: Գրեթե առանց դիմադրության հնազանդվեց Աշոտ Բագրատունու դեմ ծառացած կայսիկ ցեղապետը, երբ Հայոց զորուժը պաշարեց նրա նստավայր Մանազկերտ քաղաքը[88]: Դրանով ի դերև ելան Յամանիկ ամիրայի կողմից Աշոտ Բագրատունու դեմ նյութած դավերը: Հայաստանում շարունակեցին գերիշխել նախարարները՝ Աշոտ Բագրատունու գլխավորությամբ: Երկիրը նրանց նպատակասլաց ջանքերով մտավ քաղաքական նոր վերելքի շրջափուլ, որը 885 թ. պսակվեց Հայոց միասնական պետականության՝ Բագրատունյաց թագավորության հիմնադրմամբ:

---

[82] **Markwart J.** *Südarmenien und die Tigrisquellen, S. 368.*

[83] **Laurent J.** *L' Arménie entre Byzance et l' islam, p. 83.*

[84] **Laurent J.**, *Etudes, p. 42.*

[85] **Беляев Е.** *Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, М., 1965, с. 264.*

[86] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 242:*

[87] *Նույն տեղում, էջ 243:*

[88] *Նույն տեղում, էջ 248:*

ФЕОДАЛЬНАЯ СИСТЕМА АРМЕНИИ В 750-860-ЫХ ГОДАХ

ВАРДАНЯН В. М.

Резюме

В период правления Аббасидских халифов владетельные феодалы (нахарары) Армении из рода Багратуни проводили политику сближения с арабами, которые признавали их наследственные права. Нахарары имели огромные родовые имения, сохраняли свои княжества и армию. Однако из-за ужесточения налоговой политики Армения переживала экономический кризис. Это обострило противоречия между нахарарами и арабскими правителями. В 774-ом году в Армении вспыхнуло восстание, возглавленное представителями влиятельного рода Мамиконянов. Восставшие пытались завладеть городами Арчеш и Карин, где находились налоговые ведомства арабов. В результате поражения Армения потеряла былую мощь, однако нахарары сохраняли свои суверенные права. Род Багратуни даже расширил свои владения и усилил свое политическое влияние. Армянские нахарары сплотились вокруг этого рода. Начиная с 860-ых годов Армения переживала политический подъем, увенчавшийся основанием армянского царства Багратидов (885 г.).

FEUDAL SYSTEM IN ARMENIA FROM 750 TILL 860

V. VARDANYAN

Abstract

The Armenian feudalism of the Bagratuni adopted the policy of closing in with the Arabs Abbasids,who recognized their hereditary rights during the Abbasids era.The feudals had great patrimony estates, kept their principalities and military. However, because of the high taxes, Armenia had economic distructions. These strained the relations between the Armenian feudalism and Arabs. This led to the uprising of 774 by the Mamikonians in the forefront. The latter's aim was to occupy the towns Arjesh and Karin where the Arabian tax departments were located. In spite of their defeat and Armenia having lost their strength, the feudals kept their sovereign rights. The Bagratuni enlarged their estates and political influence and the feudals joined them. Since 860s a new political era began for Armenia which resulted the establishment of the Armenian Bagratuni kingdom.